

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ, շնորհավորում եմ ձեզ Ուսանողների միջազգային օրվա առթիվ:

«Ցանկացած պետության հիմքը դրանում բնակվող երիտասարդության կրթությունն է» արտահայտությունը, հատկապես արդիական է ներկա աշխարհում: Որքան կրթված է երիտասարդությունը, այնքան ավելի մեծ հնարավորություններ ունի հասնելու մեր երկրի կյանքում չափազանց կարևոր այն բարձունքներին, որոնք նվաճվում են կրթության և գիտության, հասարակական-քաղաքական և սահմանների անառիկության պահպանման ոլորտներում: Ես՝ որպես Սյունիքի մարզպետ, հպարտություն եմ ապրում այն անժխտելի իրողությամբ, որ Սյունիքի մարզի ուսանողներն իրենց արժանի տեղն ունեն համահայկական ուսանողության շրջանում: Հավաստիացնում եմ ձեզ, որ մշակվել և կյանքի են կոչվում բազմաթիվ ծրագրեր, որպեսզի մեր ուսանողներն իրենց գիտելիքներն ու ունակությունները կիրառեն ի նպաստ Սյունիքի մարզի զարգացման: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ուսանողության օրվա առթիվ և վստահեցնում, որ մենք պատրաստակամ ենք մշտապես թիկունք լինել յուրաքանչյուրիդ՝ ձեր կայացման ճանապարհին հանդիպած բարդությունների լուծման գործում:

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյան